ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 18 » օգոստոսի 2020թ.

№ 516-ՀՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՄԱՆՐԱԾԱԽ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանների 28-րդ կետը՝ **հրամայում եմ.**

1. Ընկերության կողմից 2020 թվականի օգոստոսի 7-ին ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման հայտի ուսումնասիրության շրջանակում իրականացնել նշված սակագների հաշվարկներում ներառվող՝ Ընկերության կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ (այսուհետ՝ Մոնիթորինգ) 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:
2. Մոնիթորինգի իրականացման համար ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.
   1) Աշոտ Ուլիխանյան — Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ,
   2) Հայկ Ղոսալմյան — Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ,
   3) Մարիամ Մոմջյան — Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետի տեղակալ,
   4) Էդուարդ Զառանցյան — Հանձնաժողովի նախագահի խորհրդական,
   5) Գևորգ Գրիգորյան — Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետի

		տեղակալ,
6)	Կարապետ Հարությունյան	Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ,
7)	Արման Դովլաթյան	Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ,
8)	Արտյոմ Ղազարյան	Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
9)	Օլեգ Գևորգյան	Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության ավագ մասնագետ,
10)	Խաչիկ Շահբազյան	Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության ավագ մասնագետ,
11)	Էդուարդ Միհրանյան	Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի ավագ մասնագետ,
12)	Հայկ Գևորգյան	Հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի ավագ մասնագետ,
13)	Մկրտիչ Գևորգյան	Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի տնտեսագետ,
14)	Երջանիկ Գևորգյան	Հանձնաժողովի գործերի կառավարման վարչության գնումների և տնտեսական բաժնի գլխավոր տնտեսագետ:

3. Ընդունել ի գիտություն, որ Մոնիթորինգի աշխատանքներին կներգրավվեն նաև՝
   1) Ջրային կոմիտեի 2020 թվականի օգոստոսի 17-ի №01/16/3300-20 գրությամբ նշված անձինք՝ համաձայն հավելվածի,
   2) սպառողների շահերը պաշտպանող կազմակերպությունների ներկայացուցիչները՝ վերջիններիս համաձայնությամբ:
4. Մոնիթորինգի համակարգումը վերապահել Հանձնաժողովի անդամներ Կամո Սարգսյանին և Սերգեյ Աղինյանին:

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

Recoverable Signature

X

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118